Արձանագրություն N 3

ՀՀ ԳՄ Ն1ՄԴ–ԳՀԱՊՁԲ-18/01 **ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստի**

գ. Նորատուս «12» «12» 2018**թ.**

ժ 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ն. Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ Ժ. Գրիգորյան, Գ. Քոլոզյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, ըստ որի <<Յունիմեդ>> ՀՌ ՀՁ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է իր կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսից ավելի 5000(հինգ հազար) ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդված 1-ին մասի 2-րդ ենթակետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի դրույթները.

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ N 8 և 14 չափաբաժիններով՝ մերժել <<Յունիմեդ>> ՀՌ ՀՁ ՍՊԸ-ն հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակցներին:

բ/ N 14 չափաբաժնով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Միեր Սարգսյան Գևորգի>> ԱՁ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ N 14 չափաբաժնով՝ <<Միեր Սարգսյան Գևորգի>> ԱՁ–ից պահանջել ներկայացնել հրավերով նախատեսված ապրանքների ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Քանի որ N 8 չափաբաժնով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից՝ <<ՌԱԶ ՇԻՆ>> ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման հայտով սահմանված գինը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ա/ ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը.

բ/ էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ 2018 թվականին դեկտեմբերի 14-ին, ժամը 10-00-ին <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի վարչական շենքում, գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովի կասեցված նիստը վերսկսել 2018 թվականին դեկտեմբերի 14-ին ժամը 11-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ն. Խաչատրյան

Անդամներ՝ _____ Ժ. Գրիգորյան

_____ Գ. Քոլոզյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան